Մարտ 15-ին հաշվեյարդարի ենթարկվեց բծաւոր տիֆի դէմ պայքարող արտակարգ յանձնախումբը. համաճարակը այլևս վերջացած էր:

Կառավարութեան յատուկ ուշադրութեան առարկայ էր երկաթուղու բարեկարգման գործը, որի համար դրսից հրաւիրուեցին ձեռնհաս մասնագէտներ. բացուեցին խոշոր վարկեր, ձեռք բերուեցին անհրաժեշտ նիւթեր: Փետր. 15-ին Հանրապետութեան երկաթուղիների ընդհանուր կառավարիչ նշանակուեց յայտնի մասնագէտ ինժ. Միքայէլ Օգանէզեանը, սպասարկութեան պետ՝ ինժ. Մ. Ալիբէգեանը, ուրիշ պաշտօնների՝ ինժ. Արշ. Պիչիկեանը, ինժ. Բ. Փիրումեանը: Մարտից սկսած երկաթուղային վարչութեան կենտրոնը փոխադրուեց Ալեքսանդրապոլ: Ապր. 29-ին յատկացուեց 11,230,537ռ. երկաթուղիները, կայարանները և երկաթուղային շէնքերը վերանորոգելու համար:

Համեմատաբար, թոյլ էր ընթանում պարենաւորման գործը: Պարենաւորման նախարարութեան մէջ ստեղծուել էր բազմիշխանութիւն. նախարար Լ. Ղուլեանը և պաշտօնակատար Ս. Ցարուբիւնեանը Թիֆլիսում և Ս. Ցարուբիւնեանի պաշտօնակատար Գ. Մելիք-Ղարագէոզեանը՝ Երևանում միաժամանակ կարգադրութիւններ էին անում, որոնք, յաճախ, խաչաձևում էին իրար և առաջ էին բերում իրաւացի դժգոհութիւն ու գանգատներ Գ. Մելիք-Ղարագէոզեանի կողմից: Վերջինս փետր. 2-ին նախարարական խորհրդի նիստում հարց յարուցեց, թէ պէտք է միջոցներ ձեռք առնել՝ վերացնելու համար բազմիշխանութիւնը: Յայտարարուեց, թէ պարենաւորման նոր նախարար է հրաւիրուած և շուտով գալու է Ֆր. Վերմիշեանը, սակայն, Վերմիշեանը դեռ երկար չերևաց Երևանում, իսկ պարենաւորման գործերը երթալով՝ աւելի և աւելի խճողւում էին: Փետր. 25-ին Մելիք-Ղարագէոզեանը նորից գանգատ ներկայացրեց Ս. Ցարուբիւնեանի քայլերի դէմ և հարց դրեց, թէ՝ արդեօք ինքը պարտաւո՞ր է ենթարկուել նրա հրահանգներին. կառավարութիւնը որոշեց, որ պարենաւորման նախարարութեան վերաբերմամբ Մելիք-Ղարագէոզեանից գատ ուրիշ ոչ ոք կարգադրութիւններ անելու իրաւունք չունի: Այսպէս տևեց դրութիւնը, մինչև որ մարտ 1-ին պարենաւորման նախարար նշանակուեց Ֆր. Վերմիշեանը: Պարենաւորման տագնապի դէմ պայքարելու նպատակով, մարտ 26-ին, յատկացուեց 50 միլիոն ռուբլի դիւղացիութեան սերմացու հայթայթելու համար:

Կառավարութեան կազմի մէջ եղան և ուրիշ փոփոխութիւններ. մարտ 27-ին զինուորական նախարարի պաշտօնից հրաժարուեց զօր. Յ. Հախվերդեանը և նոյն օրը նրա փոխարէն նշանակուեց զնդ. Ֆր. Արարատեանը՝ բարձրացուելով միաժամանակ զօրավարի աստիճանի: Զինուորական նախարարի օգնական նշանակուեց Դրօն: Ապր. 25-ին կազմուեց զինուորական խորհուրդ, որի նախագահ կարգուեց զօր. Թ. Նազարբէգեանը, անդամներ՝ զօր. Յ. Հախվերդեանը և զօր. Յ. Բաղրամեանը: Զօր. Նազարբէգեանին յանձնուեց և Հայաստանի բանակի սպարապետութիւնը: